

18369

ՄԱՅՐ - ԳՐԻԳՈՐՅԱՆ Ե. Տիկ

Դաստիարակություն ԱՆՀ

Ե - 1896


391.99  
5-38

200  
905  
891.99  
ЛП-38  
4/

## ԴԱՄՎԼԵՑՆ ՍՈՒՐ

ԴՐԱՄԱ (ԵՏԻՒԴ)

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԹՈՎ.



11

— 12003

ԶՐԻՎԱՆՅ

ՏԻՊՈԳՐԱՖԻԱ ԷՄԻՆԱ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ Տպարան է ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻ

BEREGITE KNIGU!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

25  
ЗАВІСЕК.

Дозволено цензурою. Тифлісь, 20-го Марта  
1896 года.

Настоящая драма, подъ заглавіем „Дамок-  
ловъ мечъ“ разрѣшена г. Главноначальствую-  
щимъ къ представленію на сценахъ края.  
Апрѣля 17 дня 1896 г. гор. Тифлісь.



21447-60

(2863  
41)



ԴԱՄՈԿԼԵԱՆ ՍՈՒՐ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԱՂՏՆԻՔ



Եսարանը ներկայացնում է մի  
փառաւոր կահաւորուած սե-  
նեակ։ Ա.ջ և ձախ դռներ։  
Խորքի դուռը բացւում է գե-  
պի հաշտ։

Վարագոյրը բարձրանալիս  
Տիգրանն և Մարին նստած խօսում են աջ  
կողմի սեղանի մօտ. իսկ ձախ կողմում,  
բաղկաթոուի վերայ դրուած են պորտ-  
ֆէյլ լի զանազան թղթերով և Տիգ-  
րանի զլինարկը։

ՏԵՍԻԼ 1.

ՏԻԳՐԱՆ ԵՒ ՄԱՐԻ

ՄԱՐԻ.

Այս, սիրելիս։ Մեր Գուրգէնիկի մահից յետոյ  
ինձ հիմայ մնումէ դարձեալ նախկին երջանկու-  
թիւնը միայն, երբ տեսնում եմ քեզ ինձ հետ,  
երբ յիշում եմ, որ մենք երկուսս եւ գիտակցական

ԳՈՐԾՈՂ, ԱՆՁԻՆՔ

ՏԻԳՐԱՆ ՓԱՐԳԱՆԵԱՆ։  
ՄԱՐԻ, որտ կինը։  
ԱՆԱԱ։  
ԳՈՒՐԳԻՆ, որտ որդին։  
ԾՈ.Ո.Ա.Յ.։

մաքրութեամբ մտել ենք սուրբ պսակի տակ:

ՏԻԳՐԱՆ

(Թէ՛լ շնչում է):

ՄԱՐԻ.

(Վախեցած) Ի՞նչ պատահեց քեզ:

ՏԻԳՐԱՆ

Ի՞նձ—ոչինչ:

ՄԱՐԻ.

(Շարունակ նայելով) Տիգրանի եքախն և վախենալով մինչոր սարսափելի մատից) Տիգրան... այդ ի՞նչ կը-նշանակի... Միթէ անցեալումդ... մեր ամուս-նութիւնից առաջ:

ՏԻԳՐԱՆ.

(Հանուն յեռ) Ի՞նչ. մեղքի կնե՞ր ունենամ: Հենց մի րոպէ թողնենք թէ ունեցել եմ: նոր ի՞նչ կարող ես անել, կամ ի՞նչ կարելի կըլինի անել: Միթէ կարող է այժմ, դիցուկ մի անզգոյշ անցեալ մեր ներկայ անքակտելի սիրոյն վնասել:

ՄԱՐԻ

«Ինչ անել... «միթէ կարող է»... Եւ ի՞նչ հեշտութեամբ ես արտասանում այդ խօսքերը... Բայց չես իմանում թէ ինչ սարսափելի կատակ ես ուզում անել...»

ՏԻԳՐԱՆ

Մարի, միթէ ութ տարին դեռ չփոխեց քեզ. միթէ չեն անցել, գնացել մոքիցդ այն երիտասարդական... ցնորսները... Մենք հիմայ արդէն իրական կեանքումն ենք... Դու արդէն գիտես, որ բացի բեղանից ուրիշ ոչինչ և ոչոք գոյութիւն չունի ինձ համար... Դու արդէն համոզուած-

ես իմ սիրոյ վերաբերմամբ դէպի քեզ, ինչպէս ես՝ դէպի քո... Վերջապէս դու աներկմիտ ես, որ մենք օրինակելի ամուսիններ ենք—և դա բաւական է. աշխարհն էլ կրվկայի նոյնը: Ի՞նչ կնշանակի ուրեմն, նազելիս, մտածել այն կեանքի մասին, որ մեզնից շատ վաղուց անցել, գը-նացել է... Ի՞նչ կնշանակի ուրեմն մտածել և վախենալ ջրհեղեղեան ժամանակների համար:

ՄԱՐԻ.

Տիգրան, դու այսօր ուրիշ երգ ես երգում... դու, ինչպէս տեսնում եմ, հիմայ սկսել ես մատ-ների արանքով նայել այն բանի վերայ, որն ինձ համար մահու և կեանքի խնդիր է:

ՏԻԳՐԱՆ.

(Զգուշացնում) Ոիրելիս, եթէ ես այսօր այսպէս եմ խօսում, խօսում եմ միայն նրա համար, որ դու մեր անցեալը հանգիստ թողնես... որ... իզուր տեղը մտատանջութեան տեղիք չտաս քեզ—դա քեզ կվնասի... այնինչ... մեր ներկան միանգամայն բաւական է մեր անզուգական սիրոյ յարատեռութեան համար:

ՄԱՐԻ.

Տիգրան, Տիգրան... դու խազում ես իմ սկզբունքի հետ... Տիգրան, կրկնում եմ: ինչպէս ես եմ եղել, նոյնն էլ անպայման քեզնից եմ պահանջում: Տիգրան, մի չնչին արատ անցեալումդ՝ և ինձ մահուան կըդատապարտես... Ասա ինձ, ասա ինձ ուղիղը... Այդ ի՞նչ երկդիմի կատակներ են... Ես քեզանից մինչեւ օրս այդպիսի կատակներ լսած չեմ:

ՏԻԳՐԱՆ.

ԱՌԻ, Մարի... հոգեակս... բջ եղաւ քեզ...  
ԱՆՀՈՒ ես այդպէս յուղում... Ի՞նչ անտեղի,  
մինչև անգամ ներիր ինձ, եթէ ասեմ; անմիտ  
կասկածներ են յղանում քո մէջ... Ո՞րտեղից  
բղխեց այդ միտքը;

ՄԱՐԻ.

Ի՞նչ կընշանակի ուրեմն խօսակցութեանդ  
այդ ձեւ:

ՏԻԳՐԱՆ.

Եթէ ես այս ձեռվ եմ խօսում—այդ միայն քո  
օգտի համար է,—քո օգտի... Ես կամենում եմ,  
որ դու չյիշես անցեալը, որ ոչնչացնես քո մէջ  
այդ անցեալը, և դու մի ծանր մտքից թէթե-  
ացած կըլինես... աւելի հանգիստ կըլինես...  
Դու մինչև անգամ մոռացել էիր այդ հարցը...  
և մեր կորուստից յետոյ միայն սկսեցիր նորո-  
գել... Դու աւելի զգայուն ես դարձել և ան-  
հանգիստ... Ահա քո այդ ներկայ անհանգստու-  
թիւնն է, նազելիս, որ ինձ այդպիսի խօսքեր է  
ասել տալիս... Իսկ... ինչ կվերաբերի մեր ա-  
նարատութեան... ես կարծում եմ... Մարի...  
այդ հարցը մեր մէջ պարզուել է շատ վաղուց...  
դեռ պսակի տակ չգնացած... ութ տարի առաջ...

ՄԱՐԻ.

(Թէ՛լւացած) Այս, այս... պարզուել է:

ՏԻԳՐԱՆ.

Եւ դու հաւատացել ես ինձ:

ՄԱՐԻ.

Այս. հաւատացել եմ:

ՏԻԳՐԱՆ.

Էլ ի՞նչ կնշանակի այս: Դու ինձ վիրաւորում  
ես, Մարի:

ՄԱՐԻ.

Բայց ես երկրորդ անգամն եմ նկատում, որ  
մեր անարատութեան մասին յիշելիս, դու մի  
տեսակ ցնցւում ես:

ՏԻԳՐԱՆ.

(Ի՞ր նոր հասկանալը) Ամառ... Եւ դու այդպիսի  
ցնցումներին նշանակութիւն ես տալիս... Դա  
մի նեարդարին ցնցումն էր, որ վերջին ժամա-  
նակներս ոտեղ ստեղ պատահում է ինձ... Պա-  
տահում է այդ երեքմն և գրելու ժամանակ, և  
ման գալու ժամանակ, և դատարանում, և պար-  
կած հանգստանալիս... մի խօսքով ամեն մի ան-  
սպասելի գէպքում... Ես մինչև անգամ բժշկի  
եմ դիմել... և նա պատճառաբանում այդ՝ մեր  
երեխայի մահով: Խսկ դու, այ, այ, այ... Ի՞նչ  
մտքեր ես ծնեցնում քո մէջ... և այդ մինչև ան-  
գամ ութ տարուց յետոյ էլ... այ, այ, այ...

ՄԱՐԻ.

Ներիր ինձ... Դուցէ անհեռատեսութիւն էր  
իմ լուսից... Դմչափազանց սէրս գէպի քեզ այն  
աստիճան նրբացրել է զգացմունքներս որ...

ՏԻԳՐԱՆ.

Հոգեակս, միթէ ես կասկածում եմ...

ՄԱՐԻ.

Որ... ես վախենում եմ... և վախենում եմ  
ինքս էլ չգիտեմ ինչից... Ինձ երբեմնապէս թը-  
ւում է և չեմ հասկանում թէ ինչու... որ...

Իբր քեզ էլ խլում են... խլելու են ինձանից...

ՏիգրԱՆ.

Դա աւելի ևս հաստատում է քո դեպի ինձ տածած սէրը:

ՄԱՐԻ.

Որ... իբր... դու գնում հեռանում ես ինձից... որ իբր... մեր երկուսիս մէջ կախուած է Դամոկլեան սուրը... և ահա, ահա... նա բաժանելու է մեզ...

ՏիգրԱՆ.

Ահա այդ բոլորովին աւելորդ է և անտեղի, Դու արդէն չափազանցութեան ես հասցնում ։

ՄԱՐԻ.

Որ... վերջապէս... մեր երկուսիս մէջ... մի ինչ-որ բուռն էլեքտրական զօրութիւն է գոյանում, գնալով նա աճում է, զօրանում է և արդէն պատրաստ է պայթելու և... մեզ յաւիտենական բաժանման կամ մահուան դատապարտելու... ։

ՏիգրԱՆ.

Ի՞նչ երեխայութիւն... Մարի, դէն գցիր, ազաջում եմ, այդ մտքերը. դրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ նեարդային, կամ, աւելի պարզն առած, մելամաղձոտ դրութեան արտայսցութիւններ։ Դու վերջին ժամանակներս, մեր ողորմելի երեխայից յետոյ, շարունակ մի անհասկանելի դրութեան մեջ ես։ Երեխայի վազահաս մահը քայքայել է քո ամբողջ հոգեկան աշխարհը։ Դու պէտք է զգուշանաս, Մարի։ Դու պէտք է այդ մասին լաւ մտածես։ Ես կարծում եմ, անպատճու պէտք է բժշկի օդնութեան դիմել, նրա

խորհրդներին հետեւել, ապա թէ ոչ... Այ, ես որ գատարանից վերադառնամ... (Յանկարծ նայում է ժամացոյցին)։ Այս, ես կարող եմ ուշանալ... Դու ինձ բոլորովին շամեցրիր... ձշմարիտ... Ուրեմն ցտեսութիւն, սիրելիս, ես կաշխատեմ շուտով գալ. թեթև, բայց պատասխանատու գործ է և լաւ վարձատրութիւն։ Եւ այսօր մնում է ինձ միայն պաշտպանողական ճառս և դատաւորների վճիռը ես շատ շուտ կգամ և... այդ մասին... (Վերցրել եմ իր գլխարկը և պօրտքելը)։

ՄԱՐԻ.

Ցտեսութիւն, ցտեսութիւն, աղաւնեակս։ (Համբարձում էն մշտին հայ և Տիգրանը կամառում է գնալ Աղաւնուով) Տիգրան... մի երկու վայրկեան... (Զեւուրը դնելով ուսերին)։ Նայիր ուղիղ ինձ... Այ, այդպէս... (Նարունով նայելով Տիգրանի ուսերին)։ Նոյն աչքերը, նոյն յօնքերը, նոյն արտայայտութիւնը... ։

ՏիգրԱՆ.

Մարի, բաւական է վերջապէս, երեխայ չես։ Արդէն երկու ամիս է, ինչ հոգին ենք յանձնել մեր ողորմելի երեխային, և դու նրան գէթ մի օր հանգիստ չես թողնում։ Այդպէս չի կարելի. մի փոքր էլ աղամարդութիւն պէտք է ունենաս։

ՄԱՐԻ.

Ոչինչ, ոչինչ։ մի նեղանար խնդրում եմ., Քանի չէր ծնուել այն կորածը, քեզ, միան քեզ էի ճանաչում, քեզնով էի շնչում։ իսկ հիմայ, այդ բոլորի հետ մի շատ քաղցր անցեալ, մի շատ թանգագին կորուստ եմ յիշում... Մի գիմադրիր

ինձ, մի նեղանար, աղաչում եմ... թոյլ տուր ինձ  
նայեմ երեսիդ... չէ՞ որ դա իմ միակ մխիթարու-  
թիւնս է ։ Քեզ տեսնելով, քո երեսիդ նայելով  
կրկնապատկւմ է սէրս գէպի քեզ—կենդանա-  
նում է նա... Գուրգէնիկս իմ առաջ...»

ՏիգրԱՆ.

Մարի, հասկանմում ես, ինչ ես անում։ Եթէ  
քեզ չես մեղքանում; մեղքացիր գոնէ ինձ. Եթէ  
միայն սիրում ես ինձ։ Թոյլ մի տար նեարգերիդ...  
նրանք քեզ կլինասեն... Այս, արդէն արտասուքը  
աչքերիդ մէջ...

ՄԱՐԻ.

(Զարելէլ իրէն) Ոչինչ, ոչինչ... Չգիտես, որ մի-  
երկու կաթիլ արտասուք՝ և մարդ թեթեանում  
է... ինչու ես վրդովւում... չէ՞որ նա մեր սրբու-  
թեան, մեր մաքրութեան երրորդութիւնն էր  
կազմում... միթէ կարելի է ուրանալ, որ պա-  
կաս է, պակաս է մեր երկուսիս մէջ երրորդը  
գոնէ... իսկ նորն ունենալու յոյսից զրկուած ենք  
արդէն։

ՏիգրԱՆ.

(Հոգ-ոցով) Այս, քո մահամերձ տկարութիւնը  
մեզ աժան չնստեց։

ՄԱՐԻ.

Կօթ տարեկան հասակի մէջ կորցրինք նրան...  
Ի՞նչ հրեշտակային հայեացք... Ի՞նչ ամեղ ժպիտ...  
Ի՞նչ ուրախութեան արտայայտութիւնն էր ծախ-  
կում նրա մանկական դէմքի վրայ... Ի՞նչ աշ-  
խոյժ, Ի՞նչ յօյսեր, Ի՞նչ հօգեկան մխիթարու-  
թիւնն էր սերմանում նա մեր մէջ... Իսկ այժմ...  
առողջ հօղի տակ...»

ՏիգրԱՆ.

(Զգացուած) Տեսնում ես, կրկին և կրկին  
նոյնը... ինձ էլ մի տեսակ կանացի սիրտ ես ներ-  
շնչում... Այդպէս չի կարելի։

ՄԱՐԻ.

Ոչինչ, ոչինչ. Էլ չեմ կրկնիլ... Չէ՞որ գրա մէջ  
եմ գանում իմ սկսվանքը։

ՏիգրԱՆ.

(Ի-՛ Ըալէնակով որբելով Մարտի առէերը) Սրբիր,  
սրբիր աչքերդ և խոստացիր, որ այլ ես չես  
կրկնիլ։ Անցածն անցած է և ոչնչով վերադարձ-  
նել չի կարելի։

ՄԱՐԻ.

(Սրբելով է-ը առէերը) Ահ... չի լինում, չի լինում...»

ՏիգրԱՆ.

Եթէ այդպէս կըշարունակես, ես ստիպուած  
կըլինեմ չգնալ դատարան. բայց այդպիսով մի  
տուն քանդած կլինենք... Ես կորուստի մատնած-  
կըլինեմ մի անմեղ մարդու, որն իմ պաշտպա-  
նութեան միանգամայն կարօտ է։

ՄԱՐԻ.

(Բոլորով ին զողելով իրէն) Գնա, գան, ի սէր Աստու-  
ծոյ, մի ուշանար, եթէ այդպէս է. ապա թէ ոչ  
ես կկարծեմ, թէ ես եմ այն մարդու կորստեան։  
Նրա ընտանեաց անբաղդութեան պատճառը։  
Չէ՞որ նա էլ կարող է ունենալ... Գուրգէնիկ-  
ներ... Նա պէտքէ խնամէր նրանց...»

ՏիգրԱՆ.

Այս, մեծ ընտանիքի տէր է, խեղճ և տան  
միակ աշխատաւորը։

ՄԱՐԻ.

Իսկ դու լաւ վարձատրութիւն ես սոստում՝  
դրանից... Տիգրան, մեղք չէ... Ինչո՞ւ մինչեւ ան-  
դամ ձրի զպէտք է պաշտպանես այդպիսիներին:

ՏԻԳՐԱՆ.

Ինչո՞ւ, սիրելիս. ամեն աշխատանք պէտք է  
վարձատրուի. Իսկ դրամի ոյժը քեզ յայտնի է.  
Ի՞նչ էի մինչեւ մեր ամուսնութիւնը, և ինչ եմ  
հիմայ:

ՄԱՐԻ.

Ոխ, Տիգրան... ուրեմն ևս առաւել դու  
պէտք է օգնես... Բայց յետոյ, յետոյ... կուշանաս:

ՏԻԳՐԱՆ.

Լաւ, յետոյ: Ուրեմն խոստանո՞ւմ ես, որ չես  
մտածիլ, հա՞յ, խոստանո՞ւմ ես:

ՄԱՐԻ.

Սյո՛, այո՛, խոստանում եմ:

ՏԻԳՐԱՆ.

Վեր առ մի գիրք կարդա, կամ մի որ և է  
գործով զբաղուիր, ապա թէ ոչ ես շատ ան-  
հանգիստ կրլինեմ: Խոստանո՞ւմ ես ուրեմն:

ՄԱՐԻ.

Խոստանում եմ: Խոստանում եմ: միայն դու  
մի ուշանար: Օգնիր կարեաց չափ: Դու պար-  
տական ես օգնելու ամենքին, ամենքին... ով որ  
կարօտ է: Դնա շուտով, աղաջում եմ:

ՏԻԳՐԱՆ.

(Նոյելը ժամացոյնին և անհանգուաթեամբ) Ա՛հ, հիմայ  
կարող է սկսուել դատավարութիւնը. ես շատ  
ուշացայ: (Կը ին համբոյք, բայց շատովով) Յաեսու-

թիւն: Զմոռանաս ուրեմն խոստումկ: (Վեր-  
դառնալով հաշու հակառակ կողմը) Հա, ես կերթամ  
այս յետին գոնով. դրանով բաւական ժամանակ  
կը վաստակեմ:

ՄԱՐԻ.

Գնա, պայտ գոնով գնա. գոնէ մի երկու րոպէ  
առաջ հասիր:

(Տիգրանը գնույ):

ՄԱՐԻ.

(Միայն) Եւ ով կը լինի մեղաւորը, եթէ ուշա-  
նայ... Ա՛լի Տէր Աստուած... այս ինչ արեցի ես:

ՏԵՍԻԼ 2.

ՄԱՐԻ ԵՒ ՃԱՌՅ

ԾԱՌՅ.3.

(Ներս ճանելով միջին դանից, ո-ղուում է դէռի Տիգր-  
ան սեղանին):

ՄԱՐԻ.

Սյո՛ ուր:

ԾԱՌՅ.3

Մի կին է հարցնում պարոնին:

ՄԱՐԻ.

Ի՞նչպիսի կին է:

ԾԱՌՅ.3.


Շատ նիշար և շատ էլ տկար է երեսում:

ՄԱՐԻ.

Ճանաչո՞ւմ ես:

ԾԱՌՅ.3.

Ոչ:



ՄԱՐԻ.

Կամ պարոնիդ մօտ չի եկած որ և է դատա-  
րանական գործով:

ԾԱՌԱՅ.

Ոչ. առաջին անգամն եմ տեսնում:

ՄԱՐԻ.

(Առաջին) Երեխ ողորմութիւն... (Տարային) Ի՞նչպէս է հագնուած:

ԾԱՌԱՅ.

Նատ հասարակ, բայց մաքուր:

ՄԱՐԻ.

Մաքուր... Իսկապէս պարոնիդ է հարցնում;  
թէ ինձ:

ԾԱՌԱՅ.

Ճիշտն ասած, լաւ չիմացայ՝ ձեզ, թէ պարո-  
նին: Փարվանեանն, առեց տանն է, ես էլ ա-  
սեցի՝ տանն է: (Կայաւալով գնալ) Գնամ իմանամ:

ՄԱՐԻ.

Կարիք չկայ. միեւնոյն է. ներս հրաւիրիր:

ԾԱՌԱՅ.

(Գնալ) Իսկոյն: (Բանում է իրավիք դատը և ներ-  
է առնենմ Անապային) Համեցէք: (Իրավ գնում է):

### ՏԵՍԻԼ 3.

ՄԱՐԻ ԵՒ ԱՆԱ

Ա.Ն.Ա.

(Տեսնելով Մարտին և Աւել շտունդը) .— Ո՞ւմ հետ  
պատիւ ունիմ տեսնուելու:

ՄԱՐԻ.

Տիկին Փարվանեան:

Ա.Ն.Ա.

(Յանկարծ կրտովնոնով) . Ա'... (Նկալում է. իս-  
մենում է գնալ):

ՄԱՐԻ.

Դուք կամենում էք գնալ:

Ա.Ն.Ա.

Այու:

ՄԱՐԻ.

Դուք, Երեխ, ամուսնուս էիք կամենում տեսնել:

Ա.Ն.Ա.

(Նոյնիւ) . Ամուսին... Այու... Ճեր... ամուսնուն:

ՄԱՐԻ.

Նոր գնաց:

Ա.Ն.Ա.

Իսկ ինձ ասացին, թէ տանն է:

ՄԱՐԻ.

Այո, նա գնաց այս կողմի գռնով, որպէս զի-  
շուտով հասնի գատարան. նա ուշացել էր. ծա-  
ռաները կարող էին չտեսնել նրա գնալը: (Անոն-  
հայտնում է գնալ): Դուք գնում էք:

Ա.Ն.Ա.

Այու:

ՄԱՐԻ.

Իսկ ես Ճեր մի որեւէ կերպով չեմ կարող օգ-  
տակար լինել:

Ա.Ն.Ա.

Ոչ:

ՄԱՐԻ.

Դուք տկար էք երեւում: Ճեր Ճայնը յուսա-  
հատական է: Բայց ինչու վրդովուեցիք, երբ իմա-  
ցաք թէ ես տիկին Փարվանեանն եմ: Երեխ ինձ  
չէիք սպասում տեսնել:



ԱՆՆԱ.

Այս... չէի սպասում... թէն... գիտէի...

ՄԱՐԻ.

Թէն գիտէիք, որ ես նրա ամուսինն եմ:

ԱՆՆԱ.

Թէն գիտէի... որ նա ամուսնացած է:

ՄԱՐԻ.

Ներեցէք ինձ... ես, ինչպէս տեսնում եմ... մի ինչոր գաղտնիք ալեկոծում է ձեզ... Զեր հայեցքն ու շարժմունքը անբնական են երևում ինձ... Զեր ձայնը դողում է: Նստեցէք ինդրեմ, մի փոքր հանգիստ առէք:

ԱՆՆԱ.

Ենորհա... կալ... եմ...

ՄԱՐԻ.

Եթէ կարծում էք, որ ես կարող եմ օգտակար լինել-խնդրեմ, յայտնեցէք ինձ ձեր այցելութեան նպատակը. ես ամեն կերպ կաշխատեմ օգնել ձեզ... Խնդրեմ: Ձ՞որ մենք միմեանց աւելի լաւ կհասկանանք. իսկ այր մարդիք... որովհետեւ նրանց հետ չէք կարող աւելի պարզ լինել... Ա-խ, գուցէ ծանօթ էք ամուսնուս հետ:

ԱՆՆԱ.

Այս... (ՇԺ-ՊՐՈ-ԼԵԱՀՔ) ծանօթ էի:

ՄԱՐԻ.

Ծանօթ էիք... իսկ հիմայ...

ԱՆՆԱ.

Իսկ հիմայ... չգիտեմ... կուզենայ արդեօք ծանօթ ինձ:

ՄԱՐԻ.

Ի՞նչպէս թէ...

ԱՆՆԱ.

Նա կարող է ինձնից խուսափել:

ՄԱՐԻ.

Ուրեմն նա գիտէ ձեզ տանջող գաղտնիքը:

ԱՆՆԱ.

Գիտէ... բայց...

ՄԱՐԻ.

Բայց ի՞նչ... չէ կամենում օգնել ձեզ... Խուսափում է: Պարզ եղէք, ինդրեմ, իմ առաջ: Դուք ինձնից ծածկելու կարիք չունիք: Ես... չգիտեմ ինչու... բայց զգում եմ, որ օգտակար կարող եմ լինել ձեզ համար:

ԱՆՆԱ.

Ոչ, ոչ... դա վրէժինդրութիւն կըլինէր... Իսկ ես չեմ եկել վրէժինդիր լինելու... Ես չեմ եկել քայլայելու ձեր ընտանեկան խաղաղութիւնը... Ես պէտք է միայն նրան տեսնեմ: Իսկ յետոյ, երբ որ... այն ժամանակ միայն...

ՄԱՐԻ.

Դուք ինձ սարսափեցնում էք... Միթէ ես էլ եմ իսաւն այդ գործի մէջ:

ԱՆՆԱ.

Այս... այսինքն, ոչ... Դուք ինչով էք մեղաւոր...

ՄԱՐԻ.

Խնդրում եմ... խնդրում եմյատուկ... Նստեցէք այստեղ և... պատմեցէք ինձ: Ես ամեն կերպ կաշխատեմ ուղղել իմկամիմ ամուսնուս սխալը... ամեն կերպ կօգնեմ ձեզ... Ես ոչինչ չեմ խնայիլ...

ԱՆՆԱ.

Դուք՝ հակառակ սպասածիս՝ աւելի քան բարի  
էք երեսում... բայց... գժուար թէ կարողանաք  
օգնել ինձ... այն թոյնը, որ մտել է արեանս մէջ...  
ոչնչով չէ կարելի մաքրել, ոչնչով... Միայն... մի  
ելք կայ... թոյնի ազգեցութիւնը մի փոքր թե-  
թեացնելու համար... և դրա համար էլ եկել  
եմ ձեր... ամուսնու մօտ... նա կարող է, եթէ  
կամենայ իմ վերքին սպեղանի դնել, բայց ոչ բուժել

ՄԱՐԻ :

Երդւում եմ, որ այդ սպեղանին պատրաստ եմ  
ինքս դնելու: Ես կամենում եմ, ես հոգով ցան-  
կանում եմ այդ:

ԱՆՆԱ.

Բայց... այս... գուք կարող էք օգտակար լի-  
նել ինձ... կարող էք, եթէ միայն... կամենաք:  
Դուք այդպիսով կարող էք և ձեր ամուսնու  
դրութիւնը թեթեացնել:

ՄԱՐԻ :

Կրկնում եմ, որ ոչինչ չեմ խնայիլ, միայն թէ  
արի եզէք. նստեցէք խնդրում եմ. նստեցէք այս-  
տեղ և յայտնեցէք ինձ գէթ մի երկու խօսքով:

ԱՆՆԱ.

(Նապատճէ) Երկու խօսքով... Ոչ, երկու խօս-  
քով անկարելի է:

ՄԱՐԻ :

Պատմեցէք, բան չկայ, Ես պատրաստ եմ ժա-  
մերով լսել ձեզ:

ԱՆՆԱ.

(Տապահունունով) Համեղէք: (Հազումէ): Մեր քա-  
զաքում որ շատ հեռու չէ այստեղից...

ՄԱՐԻ

Իսկ որն է:

ԱՆՆԱ.

Ի՞չ կարիք կայ: Բաւական է, որ գիտէք թէ  
այստեղ չէ: Մեր քազաքում... մի հարուստ ընտա-  
նիք կար, որ բազկացած էր հօրից, մօրից և ե-  
րեք զաւակներից... Այդ ընտանիքի հայրը, թէ վա-  
վածառական, բայց ոչինչ չէր ինայում իւր զա-  
ւակների կրթութեան համար... Մինչեւ անգամ  
ազջկան էլ ուզարկեց այստեղի ուսումնարանը  
կրթութիւն ստանալու համար:

ՄԱՐԻ

Այդ մեր մէջ հազուագիւտ դէպք է:

ԱՆՆԱ.

Այս: Եւ ազջիկն աւարտելով իւր ուսման ըն-  
թացքը, վերագառնում է տուն... (Հաթուցով):  
Բայց նախախնամութիւնն այլ կերպ էր սնօրի-  
նել... Մեծ որգին էլ, միջակն էլ՝ մեռան... Մնաց  
միայն ազջիկը... Միւնոյն ժամանակ ծառայում  
էր այնտեղ մի շատ համեստ երիտասարդ, որն  
ընդունուած էր այդ ընտանիքում, ինչպէս հա-  
րազատ որդի: Այդ երիտասարդը հետզհետէ այն-  
քան մօտեցաւ ազջկան, որ բարեկամական յա-  
րաբերութիւնները մտերմական գարձան և մը-  
տերմականը՝ սիրահարական... Աղջկայ ծնողները  
նկատում էին այդ և բոլորովին դէմ չէին դրանց  
այդ աստիճան մօտենալուն, որովհետեւ նրանք

նայում էին երիտասարդի վերայ, ինչպէս ապա-  
գայ փեսացուի... Բայց չէոր միանգամ կատար-  
ուած դժբաղդութիւնը տեղի է տալիս մի ա-  
ւելի մեծ դժբաղդութեան, և այդպէս շարու-  
նակւում է մինչեւ վերջը։

ՄԱՐԻ

Համարեա այդպէս է միշտ։

Ա.Ն.Ա.

Այո... Այդ ընտանիքին, որդոց մահից յետոյ,  
հետզետէ վրայ հասաւ մնանկութիւնը... նրանք  
օր օրի վրայ բարոյապէս մեռնում էին... Իսկ  
երիտասարդների սէրը արդէն հասել էր յան-  
ցանքի... Այս... յանցանքի... Ծնողները այդ նկա-  
տել չէին կարողացել... Նրանց գրութիւնը բա-  
րոյական անկման էր հասել... Միայն զգալով  
իրենց մօտալուտ մահը, աշխատում էին օր առ-  
աջ ամուսնացած տեսնել երենց աղջկան և այդ...  
նրանց չյաջողեց... Երիտասարդի այսօր - վաղը  
գցելը չ'երկարացրեց նրանց կեանքը... Նրանք  
մեռան մէկը միւսի ետեից... Թողնելով մի ա-  
մենաշնչին կարողութիւն իրենց անբաղդ աղջկայ  
համար։

ՄԱՐԻ

(Զժայուած) Ինչ անելանելի գրութիւն։

Ա.Ն.Ա.

Դժբաղդութեան հարուածները չբաւականա-  
ցան իրենց զոհերով, հարկաւոր էր վերջին հար-  
ուածըն ևո... օր պէտք է համեմ աղջկան... իսկ  
աղջիկն արդէն պատրաստուած էր աշխահի չքա-  
ւորների թիւն աւելացնելու եօթութ ամսից

յետոյ... Եւ աչա, իւր ծնողների մահից յետ,  
նա լսում է իւր ամուսնացուից, որ արձակուրդ  
է ստացել գնալու արտասահման... թէ ո՞ւր...  
լաւ չգիտեմ... և որ վերադառնալուն պէս, իսկոյն  
կամուսնանայ... Գնաց... և չվերադարձաւ... խա-  
բեց... Հիմայ այն աղջիկն իւր որդու հետ վե-  
րին աստիճանի չքաւորութեան մէջն է... մուրա-  
լու պատրաստի։

ՄԱՐԻ

(Ա.Ն.Ա.) Ո՛... ուրեմն գուք խնդրում էք օգնել  
նրան... Ես պատրաստ եմ... Ես պատրաստ եմ  
ամեն կերպ օգնելու... Տուէք ինձ նրա հասցէն։

Ա.Ն.Ա.

(Գլուխը շորժելով) Ողորմութիւն... ոչ, ողորմու-  
թիւն նա չի կամենում ստանալ... նա ուզում  
է, նա պահանջնում է իւր որդու համար անուն  
և ապահովութիւն։

ՄԱՐԻ

Այո... և պէտք է պահանջէր... խեղճ ողորմե-  
լի... Ես մտնում եմ նրա գրութեան մէջ... և ես  
կաշխատեմ... տեսնենք... (Նռպ Ֆուա)։ Բայց սպասե-  
ցէք, ներեցէք ինձ... այդ անունն ու ապահովու-  
թիւնը նա պահանջնում է ամուսնուցու... Այսինքն  
պահանջնում է, թէ խնդրում։

Ա.Ն.Ա.

Ո՛չ... պահանջնում է, պահանջնում։

ՄԱՐԻ

Ի՞նչպէս թէ պահանջնում... Բայց չէ որ դա  
յանդգնութիւն է։

Ա.Ն.Ա.

Նա պահանջնում է և իրաւունքով... (Պատրաս-

Տանգըլ): Զեր ամուսինն է... նրա դժբաղդութեան պատճառը:

ՄԱՐԻ

(Եկոնոելով) Իմ ամուսինս... ԶԵՔ սիրալւում արդեօք... Գուցէ ձեզ սիրալ են հասկացրել...

ԱՆԱ

ՈՉ... ես ինքս տեսայ նրան երէկ, որ գալիս էր տուն և հարց ու փորձից ճշգուեց, որ ձեր ամուսինն է հիմայ այս տան տէրը:

ՄԱՐԻ

Իսկ դժուք ով էք... կամ այն դժբաղդ աղջկայ ինչն էք... կամ ճանաչնեմ էք անձամբ ամուսնուա:

ԱՆԱ

Ես ով եմ... ճանաչում եմ թէ ոչ... Ես... Իմացէք ուրեմն... այն արատաւորուած, խաբուած, հոգեպէս մեռած, բարոյապէս խայտառակուած Աննա աղջիկը... Ես եմ:

ՄԱՐԻ

Դժուք... դժուք էք... Տէր Աստուած... (Խեղուած յայնը): Բայց... սպասեցէք... Ես... Ես... չեմ հասկանում... սարսափելի գալտնիք է բացւում առաջիս... Միթէ ամուսինս...

ԱՆԱ

Մի ամբողջ ընտանիքի պատիւ արատաւորողը իմ և իմ զաւակի դժբաղդութեան պատճառը, այո... ձեր ամուսինն է:

ՄԱՐԻ

Ամուսինս... (Երեսը ժամանելով յեւ+էրէ մէլ): Իմ ամուսինս... Այդ ինչ ասացիք... այդ ինչ էք

ասում... (Յանկարծ ռազմուելով պեղում. Գլուխը ինը ռազմուած էաբաղած): Ո՛չ, տիկին... գուք կամ մուսանում էք ձեզ... կամ... մի ինչ-որ շփոթում էք... Դա մի ամենազրելի ամբաստանութիւն է... Ես ճանաչում եմ իմ ամուսնուս... Նա նոյնքան հարազատ է եղել իւր հարսանեաց առագաստին, ոքան և ես... Հասկանում էք ուրեմն, որ այդ ամենախայտառակ զրպարտութիւն է:

ԱՆԱ

Ամբաստանութիւն... զրպարտութիւն... (Հայում է):

ՄԱՐԻ

Այս... վերջապէս ինձ ապացոյցներ են հարկաւոր:

ԱՆԱ

Դուք մի լաւ նայեցէք ինձ... Տեսնում էք... մի ոտքս արգէն գերեզմանի մէջ է... Ես չեի կեղծիլ... Ես չեի կարծող կեղծել, զրպարտել... Միթէ չի ասում ձեզ նոյնը ձեր բնազգումը... Իսկ եթէ ապացոյց էք պահանջում - ես ունիմ մի կենդանի ապացոյց, որի առաջ կըլոի ամենասխերիմ թշնամին էլ:

ՄԱՐԻ

(Արհամարհունք) Կենդանի ապացոյց... Իսկ ով էդաւ:

ԱՆԱ

Իւր որդին... իմ կեանիքիս միակ յոյսն ունեցուկը:

ՄԱՐԻ

Որդին... մէր է նա... տուեցէք ինձ նրան... Բայց սպասեցէք... ինչով էք կարող ապացուցանել, որ գա իմ ամուսնուցս է, և ոչ մի...

ԱՆԱ

(Դաւանական լիւանք) Եւս ոչ մի ուրիշից... Եւ դուք թոյլ էք տալիս ձեզ... Տիկին, բաւականացէք, աղաջում եմ, գէթ նրանով, ինչոր ես արդէն կրել եմ և կրում եմ... Ինչո՞ւ էք թափում ձեր թոյնը անբաղդիս գլխին... Ինչո՞ւ էք կամենում հանել կըրծքից այն քրքրուած սիրտը... որն իւր գոյութիւնը պահպանում է իւր միակ զաւակի համար... Ինչո՞ւ էք դուք էլ ոտքերով տրորում, կոխկրտում արդէն հանգչելու պատրաստի մի անբաղդ էակի և հանում նրանից նրա վերջին շունչն էլ... Երիտասարդական անմիտ սիրոյ հրապոյքից առաջացած մեղքս՝ արդէն ուժը տարի է ինչ քաւում եմ; և քաւում եմ ամենազառն տանջանքներով ու խայտառակութիւնով... Բաւական է, տիկին, գոնէ դուք խղճացէք...

ՄԱՐԻ

Խղճալ... Խղճալ... Բայց ի՞նչպէս... Ես ուղում եմ խղճալ, ես կամենում եմ խղճալ... բայց չի յաջողում ինձ... միտքս ուրիշ է թելաղրում, իսկ սիրտս ուրիշ... Ամհ... (Միջաց): Բայց ոչ... սկսում եմ կարծել, որ, այս, այդ աստիճան կեղծել չէիք կարող... ձեր ձայնի մէջ մի ինչոր ճշմարտութիւն է երեսում... Տէր Աստուած... միթէ իրօք ես խաբուած եմ...

ԱՆԱ

Երբ ես ներս մտայ և հանդիպեցի ձեզ—Հեռանում էի: Դուք այդ տեսաք: Բայց երբ տեսայ և լսեցի ձեզ... ինձ թուաց թէ ճանաչեցի ձեզ... Զեր քաղցր ուշադրութիւնը, ձեր սըրտե-

ռանդն վերաբերուիլը գէպի գժբաղդս, ինձ գրաւեց, սիրտ տուեց, յոյս տուեց մինչեւ անգամ ձեր օգնութեանը գիմելու... և ես բաց արի ձեր առաջ այն, ինչոր մինչեւ օրս անթափանցելի գաղտնիք է եղել համարեա տմենիքի համար... Կրկնում եմ: Հիմայ էլ ձեր գէմքը, ձեր հայեացքը գաւաճանում են ձեզ. ինձ ստիպում են աւելի համոզուելու, որ դուք չէք կարող չար լինել, որ դուք չէք կարող վրէժինդիր լինել... Իսկ եթէ... վերջապէս... բանը վրէժինդրութեան հասնէր... աւելի շուտ ե՞ս պէտք է լինէի վրէժինդիրը... որովհետեւ... որովհետեւ... գուցէ... եթէ դուք չլինէիք... Բայց բաւական է... դուք ինձ հասկանում էք:

ՄԱՐԻ

Այս... հասկանում եմ... հասկանում եմ... Հազիւ թէ դուք լինէիք մեղաւորը... (Միջաց): Բայց ի՞նչ անեմ... ի՞նչ անեմ... որ... բոպէապէս իմ մէջ ծագում է գէպի ձեզ մի անզսպելի նախանձ... որ դուք գաւնում էք ինձ համար մի արիւնաբութշնամի... Յոպէապէսէլ ես ինքս ձեր գրութեան մէջ մտնելով, այդ միւնքն զգացմանց թոյնը... ես ինձ վրայ եմ թափում... Այս գտնում եմ: որ նոյնքան մեղաւոր էք դուք իմ առաջ, որքան և ես ձեր... (Միջաց): Բայց և այնպէս... առայժմ այս կասեմ... եթէ մենք միմիեանց առաջ մեղաւոր ենք, թող ուրեմն գատի մեղ Բարձրեալը. իսկ եթէ դուք էլ իսպուած էք ինչպէս ես, որ երեսում է արդէն, այն ժամանակ ամբողջ էութեամբս խղճում եմ ձեզ:

ԱՆՆԱ

Այս... այս... գուք չէք կարող չխղճալ... այդ երեսում է... Ուստի, ի սէր իմ որդու, մեկնում եմ այսօր իմ ձեռքը և բռնում այս... (բռնում է Մարիի հագուստից) կամ իմ ձեռքը կտրեցէք, կամ ձեր այս քղանցքը, միայն թէ... օգնեցէք գէթ ձեր ամուսնու գութը շարժելու. նա ձեզնից աւելի կըքաշուէր... Եթէ մերժէք ինձ... այն ժամանակ, համոզուած կըլինեմ, որ ես երկրորդ անգամ սխալուեցի և... կըհեռանամ ձեզնից: Իսկ վերջին յոյսս, ինչպէս և առաջ, կմնայ դարձալ ձեր ամուսնու խիղճը... կամ... անձարացած... օրէնքը:

ՄԱՐԻ

Ինչու, ինչու չէք բերել երեխային. նրա ներկայութիւնը գուցէ շատ բան պարզէք իմ առաջ:

ԱՆՆԱ

Դուք դեռ կասկածում էք... Տիկին, մի ապացոյց էլ... Դուք լաւ գիտէք, որ չէի եկել ես ձեզ մօտ, այլ ուղիղ ձեր ամուսնու մօտ... Նա ինձ չձանաչել չէք կարող... Ուրեմն չէի եկել նրա մասին, նրա յետեցից բամբասելու, այլ եկել էի նրանից հայցելու այն, որ թէ օրէնքով և թէ խղճմտանքով պարտական էք կատարելու... Միայն... չկարծէք թէ ինձ համար—ոչ... Իմ երգս երգուած է արդէն, իմ օրերս համարուած են... Իմ երեխայիս համար մի ելք պէտք է գտնէի ես:

ՄԱՐԻ

(Խոր ճարածունուն) Պէտք է գտնէիք... պար-

տական էիք... և ես... այս... սկսում՝ եմ համոզուել, որ մի ինչոր բան եղած է ձեր և ամուսնուս մէջ... եղած է... (Միջոց): Իսկ ինչն է պատճառը, որ մինչեւ օրս լուռ էք մնացել... Միթէ ամուսնուս մասին տեղեկութիւն չունէիք:

ԱՆՆԱ

Ունէի: Չեր ամուսնու մասին լսում՝ էի շարունակ, թէ որպիսի արագութեամբ աճում, մեծանում է նա հասարակութեան առաջ... գիտէի, որ նա մեծ անուն, մեծ դիրք և՝ շնորհիւ ձեր՝ մեծ կարողութիւն ունի այստեղ... Բայց իմ ինքնասիրութիւնս թոյլ չէր տալիս ինձ նրա օգնութեանը դիմելու, ինձ բարոյապէս և ֆիզիքապէս մահուան դատապարտովին ձեռք կարկառելու: Բայց... քանի որ արդէն... մի ոտքս գերեզմանումն է այժմ... միանգամայն ուժասպառ դարձած... երեխաս փոքր, անպաշտպան - ընկճուեցի ես...

ՄԱՐԻ

Օ՛Հ...

ԱՆՆԱ

Վեհանձնութիւնս մի կողմ դրեցի, համեստութիւնս ու ամօթս մի կողմ, և ստիպուեցայ վերջին միջոցին դիմելու: Եւ ուրիշ ելք չունէի:

ՄԱՐԻ

Ի՞նչ սարսափելի դրութիւն:

ԱՆՆԱ

Ախ, եթէ ես առողջ լինէի—ոչինչ հարկաւոր չէր, ոչինչ... ես լուացքով ու կարով կըպահ-

պանէի երեխայիս... ի՞նչպէս անումէի մինչեւ  
այժմ... Բայց էլ ոյժ ու հնար չկայ... Ապա ի՞նչ,  
ի՞նչ է լինելու իմ որդու գրութիւնը իմ մահից  
յետոյ... Ո՞ւր պէտք է գնայ նա, ո՞ւմ պէտք է  
դիմի նա, (արդասուստով) երբ ամենքն էլ երեսնե-  
րը դարձրել են մեզնից:

ՄԱՐԻ

(Զգայուած) Ա՝ իս, ես պատրաստ էի շատ բան  
անելու ձեզ համար, շատ բան... և հոգեկան  
մի առանձին հաճոյքով... եթէ... եթէ...

ԱՆԱԱ

Դուք դեռ այս բոլորից յետոյ դարձեալ  
տատանւում էք... ես այդ նկատում եմ... Ոչ  
մի միսիթարական խօսք դուրս չի գալիս ձեր բե-  
րանից... Դուք այնուամենայիւ ցանկանում էք  
տեսնել երեխայիս... Իսկոյն ուրեմն... Ես նրան  
գիտութեամք ներս չըերեցի, որպէս զի ներկայ  
չլինէր այսօրինակ խօսակցութիւններին... նա  
այստեղ՝ ձեր ազախնու մօտ՝ պարտիզումն է:

ՄԱՐԻ

(Արտի) Նա այստեղ է, այստեղ... Ապա էլ  
ի՞նչու էք ձգձգում... շուտով բերէք այդ ան-  
քաղդ երեխային... Ամուսնուցս, եթէ այդպէս է,  
գէթ մի մազ կլինի նրա վերայ:

ԱՆԱԱ

(Սէրա առած) Օ... եթէ այդ էք ուզում գըտ-  
նել... (Զեւուլ պանելով կացնծին): Նունչս արգել-  
ում է... թոյլ տուեցեք ինձ մի փոքր հանգիստ  
առնեմ:

ՄԱՐԻ

(Զանգը պաւելու է անհամբերանեամբ. Գալիս է շատ-ան):

ՏԵՍԻԼ 4.

ՄԱՐԻ, ԱՆԱԱ ԵՒ ՃԱՌԱՑ

ՄԱՐԻ

Երեխան ազախնի մօտ է:

ԾԱՌԱՅ

Այս, նոր տեսայ, Պարտիզում խաղում է:

ՄԱՐԻ

Ասա շուտով բերի այստեղ:

(Ծառան թնառմ է: Աննան խոր, Էայց կցիտուր շոնչ  
է ուղղում և համբաւոյւողութիւններին... ու էակի հաղութ):

ՄԱՐԻ

Տէ՛ր Աստուած... այս ի՞նչ եմ զգում ես...  
Ինչու է սիրտս այսչափ բաբախում... ի՞նչ պա-  
տահեց ինձ այս բոպէիս... ի՞նչու է երեխայի  
ներկայութիւնը այս աստիճան շփոթում ինձ...

(Լուսաւ է հաշըռում Աննայի յայնը «Գուրգէնիկ,  
Գուրգէնիկ» և աղա խուլ հազ):

ՄԱՐԻ

(Վեր նակելով կոնֆենժ առեղում) Ի՞նչպէս... Գուր-  
գէ... Դա իմ կորածիս անունն է... Ի՞նչ ա-  
նենք... Միթէ չի կարող պատահել... Ի՞նչու եմ  
գողում ես... ինչիցն եմ վախենում ես... Վա-  
խենում, թէ ուրախանում...

(Մի ինչոք զըրս-ըիւն մդում է նրան ուեղի հուշը.  
և կամենում է մը ըստի լսու աւունելոյդ «Գուր-  
գիւնին», բայց դեռ պահած միջին ուան, Անսոն  
գուրգուրելով ներ է բերում երեխային):

## ՏԵՍԻԼ 5.

ՄԱՐԻ, ԱՆՆԱ ԵՒ ԳՈՒՐԳԵՆ

ՄԱՐԻ

(Երեխային աւունելուն ոլեն ճիւ և այստեղում)։ Ա-Հ...  
Գուրգէնիկս... Գուրգէնիկս... (Չուռում է նրա  
աւունը և համեսյըներով շուանում նցա երեւը, նրա յեւ-  
+երը. իսկ երեխան վախեցած բունում է ամուս օօց շրեցէց,  
որը նրան հանդուպացնում է): Տեսնում եմ կրկին քեզ,  
քո դէմքը, տեսնում եմ քո հայեացքը...)

ԳՈՒՐԳԻՆ

(Վախեցած) Մայրէկ, մայրէկ...

ՄԱՐԻ

Ասում եմ քո ձայնը... (Արդառութ և լսու):

Ա.Ն.Ա.

Տիկին, խղճացէք երեխայիս... նա վտխենում է:

ՄԱՐԻ

Այս, այս... ներեցէք ինձ... ես ինձ մուա-  
ցայ... ես ինձ մուացայ... իմ միակ և հանգած  
վերջին յոյս Գուրգէնիկի պատճէնն եմ տես-  
նում իմ առաջ... ես չկարողացայ զսպել ինձ...  
Ոչ, ոչ... այլեւս կասկած չկայ... նոյն աչքերը,  
նոյն յօնքերը, նոյն դէմքը... Տէ՛ր Աստուած, Տէ՛ր

Աստուած... (Ա-Ելի զսպելով իրէն): Միայն... ասա-  
ցէք ինձ աղաջում եմ... դուք... այնուամենայ-  
նիւ սիրում էք սորան, այնպէս յէ՛... թէ երբե-  
մըն... որպէս խաբուած սիրոյ պտուղ...

Ա.Ն.Ա.

Ծակում է սա աչքերս, կապում է ձեռք ու  
հտփս, կամենում էք սսել... Ոչ, ոչ. Էլ ինչի՞ հա-  
համար. Էլ ՞ւմ համար եմ ապրում ես աշխար-  
հիս երեսին... ոչ ապաքէն միայն սրա յուսով,  
սրա սիրով... ապա թէ ոչ շատ վաղուց կըգցէի  
ինձ գետը, կըգւորուէի ժայռից անդունդ, կամ  
մի գանակ կը ցցէի սիրտու... ինչպէս անում են  
շատերը, որոնք իմ գրութեանս մէջն են...

ՄԱՐԻ

Աւրեմն դա իմ որդիս է:

Ա.Ն.Ա.

Ի՞նչպէս... Սրան տամ ձե՞զ... չքաւորութեանս  
համար այժմէն իսկ ձեռք քաշեմ սրանից...

ՄԱՐԻ

Ոչ, ես այդպէս չասացի: Չեր որդին այսուհե-  
տեւ կլինի իմ որդիս, միայն ձեր խնամքին յան-  
ձնուած: Զէ՛ որ սրա ապահովութեան, սրա  
անուան մասին է ձեր խօսքը:

Ա.Ն.Ա.

Այս:

ՄԱՐԻ

Գուք ուրեմն սրա համար ոչինչ, ոչինչ չէք  
խնայիլ. ձեր համար էլ՝ նոյնպէս: Չեր ամեն

Ժախքերը այսուհետեւ ես կրտամն Երկուքիդ էլ  
բոլոր հոգսերը այսուհետեւ իմն են լինելու:  
Դուք պէտք է ապրէք այսուհետեւ միմիայն իմ՝  
այդ որդու համար, և ձեզանից բացի ոչ ոքի  
չեմ կարող յանձնել սրան, որ կարողանար իմ՝  
սիրոյ չափով սիրել սրան: Միայն... այս բոլորի  
փոխարէն... միխընդիր:

ԱՆՍԱ

Հրամայեցէք, իմ բարի հրեշտակ:

ՄԱՐԻ

Թոյլ տուէք ինձ շուտ շուտ այցելել ձեզ...  
Նախ՝ այս երեխայով գրկելու եմ կորած Գուր-  
գէնիկին և ապա՝ տեսնուելու իրար հետ, և  
սփոփելու միմեանց... չէ՞որ մենք երկուսս էլ  
ապաբաղդ ենք:

ԱՆՍԱ

Ի՞նչպէս... միթէ դուք էլ...

ՄԱՐԻ

Իմ որդիս մեռած էր՝ այսօր կենդանացաւ.  
Իմ ամուսինս կենդանի էր՝ այսօր մեռաւ:

ԱՆՍԱ

(Ասպատիտ) Ի՞նչ էք ասում՝ դուք: (Հայ):

ՄԱՐԻ

Ոսպնենք... Հա, սրտեղ էք բնակւում:

ԱՆՍԱ

Տիկին... այդ ի՞նչ եմ լսում... այդ ի՞նչ  
արեցի ես...

ՄԱՐԻ

Ո՞րտեղ էք բնակւում:

ԱՆՍԱ

Տէ՛ր Աստուած...

ՄԱՐԻ

Ո՞րտեղ էք բնակւում, ինձ այդ ասացէք:

ԱՆՍԱ

(Խեղուստ Յայնով) Երկրորդ փողոցում, հա-  
մար 14. բակի խորքում:

ՄԱՐԻ

Լաւ: Այս, հա... սպասեցէք մի փոքր էլ. ես  
գալիս եմ: (Գնում է այս իշխանութեալը):

ԳՈՒՐԳԻՆ

Մայրիկ, սա ո՞վ է. ի՞նչ լաւ կին է. ի՞նչպէս  
համբուրում էր ինձ: Ինչո՞ւ էր այնպէս լաց լի-  
նում: մայրիկ:

ԱՆՍԱ

Այս, Գուրգէնիկու... սա ախր իմ քոյրս է...  
Տեսնո՞ւմ ես ի՞նչ բարի կին է... նա քեզ տեսնե-  
լու ուրախութիւնից լաց եղաւ... դու էլ կըսի-  
րես նրան, այնպէս չէ... Տեսնո՞ւմ ես, քեզ ի՞նչ-  
պէս սիրում է... Միշտ քաղցրաւէնիներ կըբերի  
քեզ համար... (Յանկարծ Քայնում է. իւղ դուստ և  
լուսու լոց):

ԳՈՒՐԳԻՆ

Մայրիկ, ինչո՞ւ ես լաց լինում: ի՞նչ պատա-  
հեց քեզ:

ԱՆՍԱ

(Զաղելով իրեն) Ո՞յնչ, ոչինչ... անցաւ... մի  
բան միտս ընկաւ...

## ՏԵՍԻԼ 6.

ԱՆԱԱ, ԳՈՒՐԳԵՆ ԵՒ ՄԱՐԻ

ՄԱՐԻ

(ՆԵՐԻ ՔՊԱԼՈՒ) Ա.Հա. շատ կարիքներ կունենաք.  
Ճեռքիս եղածը միայն այս էք: Առէք առայժմ այս:  
Հիմայ կարող էք գնալ.. (ԳՐԻԵԼՈՒ ԱՆՆԱՅԻՆ) Յոհեսու-  
թիւն. հոգա քո առողջութեան համար էլ... դա  
շատ հարկաւոր է: (ԶԵՐԾ համբույր մը մանց: Մարզին որե-  
րէ իւայ նստելով գրիւում է Գուղ գէնէնին և արդասաւում աղերին  
համբույրներով ողպղում է նրան):

ԳՈՒՐԳԻԿԻՆ

ՄԵՂ մօտ ե՞րբ կըգաս:

ՄԱՐԻ

(ՀԱՅԲՈՒԵԼՈՒ) Կըգամ, կըգամ... շուտ շուտ կը-  
գամ... դու էլ շուտ շուտ արի ինձ մօտ, Գուրգէ-  
նիկո... (Նըտնի գնուում էն. ուղեցիւում է նրանց մինչ մի-  
ջին դուռը: Նըտնի երեխ) ՄԵՂ համար խաղալիկ էլ  
կըբերեմ...

(ԵՐԵ Նըտնի արդէն գնացած էն, մը միջոց Մարզին  
նոյնում է իւր նըտնի երեխից դատարկ դարձութեան  
ուղղած իւր հոյեցոցը, առա մը յեւունը յեւուում է  
միջին դուռն անհինեն և գլուխը դնուում է իւր յախ  
ընեկ իւայ, իւու աջ յեւունը նաշինակը հօպեցնուում է  
ացերին և լուս հեկիւում):

Կ Ա. Ր Ա. Գ Ո Յ Ր.

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՂԱԿՈՐԸ ԴԱՏԱԿՈՐԸ

Վայն տեսարանը:

Մարզին ընկած է բաղկանում խորուում և ընկանած  
է վշտաբէկ մատանցութեանց մէջ. առա մը տանի վայրէնից  
յետոց՝ օնտափուում է իւր մը անհանգիւուր ունից համ մը մզյա-  
ռանջին, որ հաշիտութեւ— շնորհիւ եր նրա ամբողջ մաս մէնը:

## ՏԵՍԻԼ 1.

ՄԱՐԻ

Խաբուած եմ... խաբուած եմ... այլ ևս  
կասկած չկայ... գնաց իմ երեակայած երջան-  
կութիւնը... կտրուեց այն սիրոյ թելը, որով  
ութ տարի շարունակ այնպիսի հոգեկան ներ-  
գաշնակութեամբ կապուած էինք իրար հետ...  
Զէ եղել ուրեմն այն անարատութիւնը նրա մէջ,  
որի յուսով, որի վրայ հիմնուած միայն՝ ամուս-  
նացայ ես նրա հետ... Այս իմ՝ կարողութիւնս  
շացրել էր նրան և նա իւր սիրային գայլայլիկ-  
ներով խաբել է ինձ... ինձ էլ... ինչպէս և  
գժբաղդ Աննային... (Մէջոց) Գուրգէնիկս, Գուր-  
գէնիկս... գոնէ քեզ եմ կենդանացած տեսնում

ես... Տեսայ քո անմեղ ժպիտն ու երկիւղը, զգացի քո գգուանքը, լսեցի քո ձայնը... քո կենդանի շունչը մտնելով կուրծքս, ինձ արխութիւն, ոգեսորութիւն ներշնչեց... Գուրգէնիկս, ես հիմայ ապրելու եմ միայն քեզ համար, քո յիշատակի համար... Այս երեխայի բաղդաւորութեան մէջ՝ կտեսնեմ քեզ, քեզ երջանիկ... (Յուստափ լոյ. աղա որբում է արագ աղերը: Երեւաճաբար և առաջ հայեցած է գյում իւր շուրջը): Իսկ եթէ... մեր գերեր փոխուած լինէին... ինչպէս կնայէր արդեօք Տիգրանը... կներէ՞ր արգեօք նաև ինձ... երբէք: Այր մարդիկ աւելի բծախնդիր են, այր մարդիկ աւելի պահանջող... (Յանիաշ մէ նոր մքանչում է Մարտի երեսը): Ա՛հ... ինչ գեղեցիկ միտք... — Որդին՝ իմն է... դատավճիռը նրա՛... որի կատարումն տալը կրկին իմն... Հարկաւոր է միայն կեղծել... Օ՛հ... որպիսի վրէժով լցուեցաւ սիրտս... (Միջոց): Ահա նա... գալիս է...

## ՏԵՍԻԼ 2.

### ՄԱՐԻ ԵՒ ՏԻԳՐԱՆ

#### ՏԻԳՐԱՆ

(Ուրացի ներս հանելով) Բարե, Մարի... (Զարմացած նայում է հեռուստի կող վրայ): Մարի... այդ ի՞նչ կընշանակի... ինչո՞ւ այդպիսի սառնութիւն... ինչո՞ւ չես վազում, ընկնում գիրկս, ինչպէս և միշտ... (Մօդենալով): Իսկ ես այն գործը տարայ...

ազատեցի... Գու չես ուրախանում... Ո՛խ, դուքուրվին գունատ ես... Ի՞նչ է պատահել քեզ... հոգեակս... աղաւնեակս... Դու տկա՞ր ես... Դուքեզ չես նմանում, Մարի...

#### ՄԱՐԻ

(Կերպ + աղաւնեակս) Ոչինչ, ոչինչ, սիրելիս... այդմի բոպէտական դրութիւն էր:

#### ՏԻԳՐԱՆ

Բայց ես քեզ այդպիսի դրութեան մէջ չեմ տեսել երբէք: Ինչո՞ւ ուրեմն չես բարեում իմ գալուստը, ընկնում գիրկս... Երեկի խոստմնազանց ես գտնուել, հա՞... և մեր երեխայի կորուստը դարձեալ... Բայց դու գողում ես... տկար չես արգեօք... Ինչ որ անբնական է... Ուղարկեմ բժշկի...

#### ՄԱՐԻ

(Կանգնեցնելով) Ո՛չ, հարկաւոր չէ, սիրելիս... ես տկար չեմ... և ոչ մի բժիշկ ինձ օգնութեան համնել չէ կարող... Ես... ես... Մի ուրիշ միտք է կրծոտում ինձ... ես... չեմ կարողանում գիմանալ... (Ըստնելով գիրկ): Տիգրան... ես վազուց կամենում էի քեզ հետ խօսել... չէի վստահանում... Բայց այսպէս ապրել չի կարելի... Սրանից աւելի կեղծելն անհնարին է:

#### ՏԻԳՐԱՆ

Դու վախեցնում ես ինձ...

#### ՄԱՐԻ

Գուցէ: Իրաւունք էլ ունիս վախենալու... Այն

միտքը, որ ինձ շարունակ տանջում է...

ՏԻԳՐԱՆ

Բայց ես երբէք, երբէք չեմ տեսել քեզ այսպէս... նոյն իսկ մեր...

ՄԱՐԻ

Այո՛, չես տեսել: Քո շուտափոյթ վերադարձը պատճառ եղաւ, որ ես դաւաճանեմ ինձ... Իմ ներքին ամենաբուռն խռովութեանց ժամանակ վերայ հասար:

ՏԻԳՐԱՆ

Ես քեզ չեմ հասկանում, սիրելիս... Ի՞նչն էր կարող արդեօք խռովել քեզ... Քո միակ հոգացողութիւնը, սէրը, եղել եմ մինչև օրս ես, իսկ իմ՝ դու... Ութ տարուան ընթացքում, բացի մեր որդու վաղահաս մահից, ուրիշ ոչինչ չէ խռովել մեզ. և ես քո մէջ երբէք չեմ դտել... մի որ և է...

ՄԱՐԻ

Այո, այո. Ճշմարիտ է. որովհետեւ դու չէիր կարող մտնել իմ մտքերի ներսը, թափանցել հոգուս խորքերը:

ՏԻԳՐԱՆ

Մարի... դու ինձ խելագարութեան ես հացնում:

ՄԱՐԻ

Այո՛, որովհետեւ խելագարը ես եմ: (Կըին ընկնել գիրիք): Սիրելիս, (Հայովայն) ես հանգիստ չունիմ: Ես այլես չեմ կարողանում ծածկել իմ մէջ այն յանցանքը...

ՏԻԳՐԱՆ

Յան...ցան...քը...

ՄԱՐԻ

Որ միշտ և անդադար ծանրանում է կուրծքիս վրայ... և քանի քո սէրն եմ վայելում—աւելի ու աւելի սեղմում է սիրտս, խառնում է միտքս...

ՏԻԳՐԱՆ

Ասմ ինձ, Մարի, ասմ, ինչո՞ւմն է յանցանքը... գու կարող ես վստահ լինել իմ վրայ... գուցէ ես կարողանամ քեզ սփոփել:

ՄԱՐԻ

Դժուար: Ես ճանաչում եմ քեզ, վախենում եմ: Որ իմ վարունքովս կըխորտակեմ քո ամքողջ խաղաղութիւնը:

ՏԻԳՐԱՆ

Բայց դու ի՞նչ յանցանք կարող ես ունենալ... կամ, վերջապէս, ո՞ւմ դէմ է ուղղած այդ յանցանքը...

ՄԱՐԻ

Աւանդ, քո:

ՏԻԳՐԱՆ

(Եկամուտած) Իմ դէմ... (Մասածելով): Իմ դէմ դու ոչ մի յանցանք չունիս... Ես ոչ մի բանում չեմ կարող և իրաւունք չունիմ կասկածելու քո մասին:

ՄԱՐԻ

Ահա չենց այդ է, որ ինձ խելագարութեան է հասցնում:

ՏԻԳՐԱՆ

Բայց... միթէ...

ՄԱՐԻ

Այո, ես մեղաւոր եմ քո առաջ:

ՏԻԳՐԱՆ *Ա/Հ/Ջ/Գ/Գ/Գ/*

(Աղավն) Դու... մեղաւոր ես... իմ առաջ:

ՄԱՐԻ

Ահա հենց դրանումն է ամբողջ գաղտնիքը՝  
որ այլևս չեմ կարողանում ծածկել քեզանից, և  
քանի գնում է, հանգամանքները այնպէս են  
գասաւորւում, որ ծածկելն այլևս անհնարին  
է ինձ համար: Եթէ մինչեւ օրս խարել եմ, էլ  
չեմ կարողանում շարունակել այդ խարէու-  
թիւնը... Այս, որքան երջանիկ կլինէի, որ մեռ-  
նէի այն ծանր հիւանդութեանս ժամանակ:

ՏԻԳՐԱՆ

Իյումն է վերջապէս այդ խարէութիւնը...  
Ես սարսափում եմ, երբ մոքովս անցնում է, որ  
դու... կարող էիր...

ՄԱՐԻ

Ների՞ր ինձ...

ՏԻԳՐԱՆ

Ինչպէս... միթէ ուղիղ է իմ խելացնոր են-  
թագրութիւնս...

ՄԱՐԻ

Այո, ուղիղ է. ես որդի ունիմ:

ՏԻԳՐԱՆ

(Նանեահար) Որդի... սպասիր, սպասիր... միտքս  
շփոթում է... Այդ ինձ անհաւատալի է թը-  
ւում... Դու էլ ես ինչ-որ շփոթում...

ՄԱՐԻ

Ութ տարեկան:

ՏԻԳՐԱՆ

Ութ տարեկան... ութ տարեկան... Ուրեմն  
մեր ամուսնութիւնից առաջ... (Մատան-է):  
Ոչ, ոչ... ինչ-որ կրկին շփոթում ես... ինչ-որ  
այնպէս չէ... (Աւելի խոր մաքելով): Ես... ես...  
ես ոչինչ չեմ յիշում... Մտքերս խառնում են...  
ես ցնորուած եմ... Միթէ իրօք...

ՄԱՐԻ

Այո, իրողութիւն է:

ՏԻԳՐԱՆ

(Կապաղելով) Իրողութիւն... իրողութիւն... և  
դու հաստատում ես այդ... (Մէ Քուր Թջոց աղա-  
լան+ով): Մարի, Մարի... ի սէրն Աստուծոյ... ասա,  
որ կատակ ես անում... Ես համոզուած եմ, որ  
դու... կատակ ես անում... Այդպիսի բան չի  
կարող լինել... Հանգստացրու ինձ, աղաչում եմ...  
(Մէ Թջոց): Դու լո՞ւմ ես... Մարի, ես խարիս-  
փում եմ այդ սոսկալի մթութեան մէջ... ես  
խելագարում եմ... Մարի, մեղքացիր ինձ... մի  
րոպէ շուտ հանգստացրու ինձ... Ասա, ասա որ  
կատակ ես անում... ծիծաղիր վրաս... ծիծա-  
ղիր, Մարի, որ այս աստիճան յիմարացրիր ինձ...  
(Մէ Թջոց): Վերջապէս... կեղծիր, կեղծիր գոնէ...

ՄԱՐԻ

Դու պահանջում ես, որ ես կրկին կեղծեմ...  
Ոչ, այլևս չեմ կարող. իմ ուժիցս վեր է:

ՏԻԳՐԱՆ

(Վերին աստիճանի վհագութեամբ և կմաքելով արահելը):

Ուրեմն ուղիղ է... ԱՇ... այդ ինչ հարուած էր, որ հասցրիր ինձ... Էլ ումն է կարելի այսուհետեւ հաւատալ...

ՄԱՐԻ

(Սըտի խորժուած ուրախացած իւր յաջողութեամբ և աւլի սփեռուած) Ահա այդ միտքն է, որ խումը է անդադար իմ հոգեկան անդորրութիւնը, այդ ողորմելի երեխայի ապագան է. որ հասցնում է ինձ հիւանդութեան ցնորքների:

ՏԻԳՐԱՆ

ԱՇ... այդ ինչ եմ լսում... այդ ինչ եմ լըսում... այդ ինչ ես ասում դու... ի՞նչ էիր ասում մի ժամ սրանից առաջ, և ի՞նչ ես ասում հիմայ... Ուրեմն կեզծ են եղել քո բոլոր բարոյական սկզբունքներդ և սիրոյ անվերջ թոթովանքներդ... Ամբողջ եօթ ուժ տարի դու աղաւնու դիմակի տակ ծիծաղել ես իմ վրաս... խաղացել ես իմ զգացմունքերիս հետ... ծաղրել ես այն ամենը, ինչ ինձ համար միմիայն սրբութիւն է եղել... ԱՇ, աՇ, աՇ...

ՄԱՐԻ

(Այս մշտիքուութեան ժամանակ հետովներէ հօտանալին էր, վրդուած է, բայց էսկան յիշելի էր կտրաբէշտ դեռ՝ զաղուած է իրէն): Հանգստացիր, հանգստացիր, աղաջում եմ...

ՏԻԳՐԱՆ

Հանգստանամ... Ի՞ս... Ես ի՞նչպէս հանգստանամ այսուհետեւ, երբ պարզապէս տեսնում եմ որ այն բոլոր գգուանքներդ ու փաղաքանքներդ ինձ համար փուշ և տատասկ են եղել և

արդէն հիմայ իսկ՝ ծակծակում են ամբողջ մարմինս... Ես ի՞նչպէս հանգստանամ; Երբ հիմայ, տեսնում եմ, որ այն ձեռքերը, որ ինձ թւում էր, թէ անմեղութեամբ փարում էին վզովս—արատաւորուած էին... ապականուած էին... նրանք, ինձանից առաջ, փարել էին մի ուրիշի վզով... Այն համբոյրները, որ ջերմութեամբ թափւում էին երեսիս— վատշուէրական էին... Ապա ուր են, ուր քո այն համոզմունքն ու գաղափարական հայեացքը առագաստի մաքրութեան մասին, որ որպէս առաջին պայման դրուած էր առաջիս... Միթէ դա մի փառաւոր խարդախութիւն էր, մի անթափանցելի վարագոյր էր ազքերս կապելու համար... ՕՇ, օՇ, օՇ... ամենադառն ձշարտութիւնը արիւնով լցնում է սիրտս...

ՄԱՐԻ

Տիգրան, Տիգրան, բաւական է. խնայիր ինձ:

ՏԻԳՐԱՆ

Խնայեմ քէզ... իսկ խնայել ես արդեօք դու ինձ... Էլ ի՞նչ երեսով պէտք է նայեմ այսուհետեւ աշխարհի վրայ, իմ շուրջը... Էլ ի՞նչ հանգըստութիւն կարող է լինել ինձ համար, երբ մի կողմից քո գարշելի, քո լպիրշ սիրեկանի, իսկ միւս կողմից քո ապօրէն որդու գոյութիւնները շարունակ պէտք է կագնեն մեր երկուսիս մէջ... կամ գիշեր և ցերեկ պէտք է պտտուեն իմ մըտքերիս, ուղեղիս բոլոր խաւերում... Այդ էր ուրեմն այն Դամոկլեան սուրը, որից մի ժամ առաջ այնպէս վախենում էիր... որը քեզ թւում էր, թէ պէտք է բաժանէ մեզ... Ի՞նչ

սոսկալի հարուած... Ա՞յս, ինչու, ինչու ասացիր... ինչու բաց արիր իմ առաջ այդ սարսափելի գաղտնիքը... Ա՞հա... աւելի լաւ էր խաբուած լինել... խաբուած լինել...

ՄԱՐԻ

Անցածն անցած է:

ՏԻԳՐԱՆ

Եւ այդպիսի սառնութեամբ ես ասում...

ՄԱՐԻ

Բայց ինչու ես մոռանսում, որ հաւատարիմ եմ եղել քեզ մեր ամստանութեան օրից մինչեւ այսօր. ինչու ես ուրանում գոնէ այդ:

ՏԻԳՐԱՆ

Խայտառակութիւնը միշտ խայտառակութիւն կը մնայ և արատը — արատ: (Առանցքն): Տէ՛ր Աստուած... միթէ ես եմ մաքուրը... միթէ ես էլ պայմանագրուժ չեմ... ապա ինչու է կը ծոտում ինձ իմ ներսը... ինչու է այս սե նախանձը այրում ինձ...

ՄԱՐԻ

(Նոյելը շարունակ Տիգրոսի գագառնունիք վրայ) Դու տատանւում ես... Սխալը կատարուած է և դու պէտք է թեթեացնես իմ այս անտանելի դրութիւնը: Միթէ չէ՞ր ասում դու ինքդ, թէ պէտք է մառանալ անցածն...

ՏԻԳՐԱՆ

(Արհամարհանով) Սխալը կատարուած է... պէտք է մոռանալ անցեալը... (Միջը): Այս եթէ այդպիսի մի սխալ անէր այր մարդ... ուրիշ հարց է... կարելի էր ներել... որովհետեւ, որովհետեւ

այդպէս են և ամենքը... Բայց դու... դու... իմ գլուխը... իմ կինս... կինը մարդու գլուխը... Ես ցնորուում եմ..., ես յարմարուել չեմ կարողանում այդ մոքին...

ՄԱՐԻ

(Կապազելով) Տիգրան... (Պարզեալ սանցում է էրեն):

ՏԻԳՐԱՆ

Դու դեռ խրոխտում ես... պատրաստում ես վիճել... վիճել... Ասա ինձ, ասա... ինչով կարող է ուղղուել այն ճաքը, որ առաջացել է մի անզգոյշ վարժունքից ապակու վրայ... Ի՞նչով կարելի է ուղղել այն սխալը, որով ձգւում է մի ժանտահար օձ մէկի կուրծքի մէջ... Ոչ պարէն այդ օձը պէտք է շարունակ գալարուի ու խայթի, թափի անխնայ իւր թոյնը իւր նեղ, սեղմուած շրջապատի վրայ, մինչեւ որ կըքրքրի, կըծակծակի, կ'ոչնչացնի նրան...

ՄԱՐԻ

Դատիր, ինչպէս գիտես, խօսիր ինչպէս ցանկանում ես, միայն մի ելք գտիր ինձ. մի ելք:

ՏԻԳՐԱՆ

Եւ ոչ մի ելք: Կինն այն ժամանակ է կին և պաշտելի կին իւր ամստանու համար, երբ նա, ինչպէս առաջ, նոյնպէս և ամստանութեան ժամանակ անբիծ է ինչպէս հրեշտակ, մաքուր է ինչպէս ձիւն: Նա անմիջապէս կորցնում է իւր ամբողջ գրաւչութիւնն ու նշանակութիւնը, երբ նա գաւաճանել է իւր ամստանու, բարոյականութեան և օրէնքի առաջ: Նա — անկած կին է համարուում:

ՄԱՐԻ

(Ա-ԵՒ կառաղած) Տիգրամն... այդ արդէն...  
(Յանկարժ Նշանաշնում է յայնը): Ես պատրաստ եմքո  
առաջ ծնկաչոք աղաչել ինձ ներումն... միայն  
թէ...

ՏԻԳՐԱՆ

Միայն թէ ներէի, ներէի... և այդ ներումն  
դու խնդրում ես գայլի կատաղութեամբ և  
գառան աղաչանքով... Միայն թէ ներէի...

ՄԱՐԻ

Ոչ. այդ գեռ բաւական չէ: Դու ուրիշ պարոք  
էլ ունիս կատարելու, եթէ թանգ է քեզ հա-  
մար իմ կեանքը, եթէ կեզ չէ եղել դէպի ինձ  
քո սէրը: Դու պէտք է երեխայիս ընդունես,  
ինչպէս քո երեխային. դու պէտքէ մեր անունը  
տաս նրան:

ՏԻԳՐԱՆ

Անգութ... այդ արդէն չափազանց է... Միթէ  
բաւական չէ, որ դու իմ առաջ բարձրացնում  
ես վրայիդ ամենաթանձր քողը, որով մեծ ճար-  
պիկութեամբ այսքան տարի ծածկուած ես եղել...  
Միթէ բաւական չէ, որ ցոյց ես տալիս ինձ քո  
սրտի, քո հոգու ամենատգեղ խորշերը և ամենա-  
ախտոտ մերկութեամբ արդէն յանդգնում ես  
կանգնել առաջին... որ հիմայ ձգտում ես նոյն  
անել և ընդհանուրի առաջ... Միթէ, վերջասկէս,  
բաւական չէ, որ մինչեւ օրս ծիծաղել ես քո մէջ  
գու, միայն դու իմ վրայ, հիմայ ցանկանում ես,  
որ ծիծաղեն ամենքն էլ... (Կամնալ գնալ):  
Որքան ցած ես... որքան ապականուած ես...

ՄԱՐԻ

(Զապատակ) Ներիր ինձ, աղաչում եմ... խնայիր  
գոնէ որդուս:

ՏԻԳՐԱՆ

(Մարիկ Լըոյ սուր հայեաց + Գյելուց յեպոյ) Մեր մէջ  
ամեն ինչ վերջացաւ: (Արտի Բնում է իւր սէնեակը):

ՄԱՐԻ

(Միայն ամենդ ջաղէն վրէժ բարձրաց) Այս... Մեր  
մէջ ամեն ինչ վերջացաւ... իւր բերանով կար-  
գաց իւր գատավձիուր և ես հասայ նպատակիս...  
Իսկ հիմայ աւելի ոյժ կունենամ ես՝ կատարումն  
տալու նրա սրտից բղիած այդ գատավձոյն:

ՏԵՍԻԼ 3.

ՄԱՐԻ, ԵՒ ՃԱՌԱՑ

ՄԱՐԻԱՑ

Այն կինն էլի եկաւ. իւր երեխայի հետ:

ՄԱՐԻ

Որ նոր այստեղ էր:

ՄԱՐԻԱՑ

Այո: Հազիւ է կանգնում ոտքերի վրայ. շատ  
հիւանդ է երեսում: Կէս ժամ կլինի, ինչ եկել  
է ու պարտիզում նստել: Հիմայ էլ ձեզ է հար-  
ցնում:

ՄԱՐԻ

Ներս հրաւիրիր. շուտու:

ԾԱՌԱՅ

(Կամենալով քնար բոյց կոնդ է առանում) Տիկին,  
ինչքան նման է այս երեխան մեր...

ՄԱՐԻ

Լուիր, լուիր... քեզանից ոչ ոք կարծիք չի հար-  
ցնում ։ Նուտով ներս հրաւիրիր։

(Ծառան գնում է)։

ՄԱՐԻ

Ի՞նչ է պատահել արդեօք . . . Գնալիս շատ  
յուղուած էր . . . Ի՞նչ կնշանակի արդեօք նրա  
այս կրկին և շուտափոյտ այցելութիւնը . . . Մի  
գուցէ սաստկացել է տկարութիւնը . . . Գուցէ մի  
ուրիշ օգնութեան էլ է կարօտ . . . Պէտք է ան-  
շուշտ միմիթարել նրան։ (Գնում է ուշակ մջնուց)։

## ՏԵՍԻԼ 4.

ՄԱՐԻ, ԱՆՆԱ\*) ԵՒ ԳՈՒՐԳԵՆ

ԱՆՆԱ

Ես չկարողացայ հասնել մինչեւ տուն . . . Ես  
վերադարձայ . . .

ՄԱՐԻ

Ոչինչ. շատ լաւ արեցիք։ Դուք բոլորովին  
տկար էք երեսում։ Ի՞նչ պատահեց ձեզ։ Նստե-  
ցէք . . . նստեցէք այստեղ . . . Դուք ոտքի վրայ չէք  
կարողանում կանգնել . . . (Նագեցնում է Աննային  
ցայ առառժ Հոգիունուի վրա)։

\*) Այս տեսիլում Աննան ամելի ուժապատ է երևամ։ Խոզ և  
սահման հազը սաստկանում է երկար խօսելիս։

ԱՆՆԱ

Ա՛խ, ինչո՞ւ մենք պէտք է իրար պատահէ-  
ինք . . . կամ ինչո՞ւ գուշ այդ աստիճան բարի  
պէտք է լինէիք գէպի ինձ, գէպի իմ որդին։

ՄԱՐԻ

Բայց ի՞նչ, ի՞նչ պատահէց ձեզ։

ԱՆՆԱ

Այստեղից գուրս գնալուցս յետոյ . . . աւելի  
խոր զգացի, թէ ինչ հարուած հասցըցի ձեզ . . .  
Այս . . . ես . . . խորտակեցի ձեր անգորրութիւնը . . .  
ձեր մաքուր սիրուր . . . լացի և սուգի փոխեցի . . .  
Զէօր դուք ոչնչով մեղաւոր չեք . . . (Ա-էլի շնչա-  
ռողաւու)։ Ներեցէք ինձ . . . ներեցէք ինձ . . .

ՄԱՐԻ

Ի՞նչ . . . դո՞ւք . . . Դուք խնդրում էք ներո-  
ղութիւն . . . Ո՛չ, դուք չպէտք է այդ անէք . . .  
դուք արժանի էք յարգանքի . . . որովհետեւ . . . դուք  
ազնիւ էք . . . և այդ երեւաց հենց սկզբից . . .  
Ա՛խ, իսկոյն . . . (Դատանալով Գուրգէնին)։ Գուրգէ-  
նիկ, արի ինձ մօտ . . . (Ինչը հօգենում է նրան, համ-  
բույսում է և նոպեցնում խորդում)։ Այ, թէկուզ այս-  
տեղ . . . նստիր, աչքի լոյս . . . (Աշուտ հօգենում է  
ուղանին, վըրյունում է նկարների ալբոնը և առալիս է  
Գուրգէնին)։ Այ, առ, հօգենակս, այս գիրքը . . . տես,  
ինչ սիրուն պատկերներ են . . . մէկ մէկ, մէկ  
նայիր . . . այ, այսպէս . . . Դու մեզ վրայ ուշք մի  
գարձնիլ . . . մենք մայրիկիդ հետ խօսում ենք . . .  
Հիմայ կուզարկեմ քեզ համար խաղալիկ էլ կառ-

Նեն... Ես հիմայ մի փոքր մայրիկիդ հետ խօսում եմ... Հասկացար: (Դռւթէնը բէլիով համայն-նո-նէան նշոն է առում): Այս ապրես: (Մօտենալով Անապէն): Այս դուք ենթարկուել էք ձեր առաջին սիրոյ ազգեցութեանը... դուք խաբուել էք... և դա զարմանալի չէ մի անփորձ օրիորդի համար:

Ա.Ն.Ա.

Ո՞...որքան բարի էք... ո՞րքան բարի էք... իսկ ես... (Կցիտուր շունչ + աշելուց յետոյ, այնուած է աշուտը): Ահա... այդ էր պատճառը, որ ճանապարհին սիրտս սկսեց թուլանալ... ոտքերս հըրաժարուեցին ինձ ծառայելուց... փոքր էր մնում, որ վայր ընկնէի... միայն այնքան յաջողուեց ինձ, որ կարողացայ փոքր ի շատէ մի յարմարաւոր տեղ նստել... Փողոցի անցուգարձանողները նայում էին ինձ կասկածանքով... Պտտուեց գլուխս... ել չեմ յիշում: (Խթցնելով յայնը) Երեխան, ինչպէս երեւում էր, վախեցել էր... օրովհետեւ նրա լացի ձայնն ինձ արթնացրեց... և ես... հազիւ վերադարձայ... Այստեղ աւելի մօտ էր... Զեր պարտիզում մի փոքր հանգստացայ...

ՄԱՐԻ

Հատ խելօքութիւն էք արել, որ վերադարձել էք ինձ մօտ... դուք բոլորովին գունատուած էք, և թոյլ... հազը ձեզ հանգիստ չի տալիս... Զեզ օգնութիւն է հարկաւոր: Ես հիմայ կուզարկեմ բժշկի:

Ա.Ն.Ա.

Վախեցայ... վախեցայ... որ փողոցում կը մնար երեխաս... և ես ժողովեցի իմ բոլոր ուժերս... եկայ ձեզ մօտ... (Յանկաց հէկէտալով) Քոյր իմ; քոյր իմ... ես զգում եմ մի ինչ-որ... ես զգում եմ, որ շատ չէ մեացել ինձ ապրելու... Շտապեցի... միակ խնդիրս կրկնել քեզ...

ՄԱՐԻ

Ա.Ն.Ա.

Որդուս... Գուրգէնիկիս... ես քեզ եմ յանձնում... պաշտպանիր... ազատիր նրան գէթ ապագայ թշուառութիւնից... Դու մայր ես եզել... գիտես, թէ ինչ է զաւակը...

ՄԱՐԻ

Ա.Ն.Ա, Ա.Ն.Ա... Ինչու ես քեզ կորցնում... Այդ ինչ փոքրոգութիւն է... (Զանգ է առւելի գույն է ծառւան):

**ՏԵՍԻԼ 5.**

**ՆՈՅՆՔ ԵՒ ՃԱՌԱՑ**

ՄԱՐԻ

Գնա բժշկին հրաւիրիր. շնոր:

(Ծառան գնուած է):

Ա.Ն.Ա.

Բժշկի... ի՞նչ կարող է անել բժիշկն ինձ...

ՄԱՐԻ

Ի՞նչո՞ւ... Շատ բան կարող է անել... միայն  
դու մի վհատիք :

ԱՆԱԱ.

Իմ երեխաս... (Արտասահման է): Մի կաթիւ  
ջուր...

ՄԱՐԻ

(Արտ բերելով ջուրը՝ խճանում է) Հանգստացիք,  
սիրելիս, հանգստացիք... միանգամայն վստահ  
եղիք ինձ վրայ... Իմ սերս ու անձնական կա-  
րողութիւնս Գուրգէնիկինդ է այսուհետե...  
պաշտպանիք միայն քեզ... Գնանք իմ սենեակս...  
այնտեղ աւելի հանգիստ կըդժնես... Վեր կաց,  
սիրելիս, վեր կաց...

## ՏԵՍԻԼ 6.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՏԻԳՐԱՆ

(Անսան Մարիկ օքնութեամբ վեր է կենաց ուելէց  
և աղյուսաց է դեղի նրա ռենեակը: Մի երկու ժայռ  
էր գոյելնո՞ւ հաղի-շարժություն, երբ Տիգրանը թւեմբիւ  
յեւ-ին, ամենալայտաց արտահոգութեան առի, դուր  
է գույս աղ դունից և կամուս է գնալ մեջին դունով:  
Արա աղքն անմիջապէս ընկնում է Գուրգէնէ վրայ.  
Էր դունից մէ ժայռ հետու կանք է առնում և լարութ-  
աշցութեամբ շարունակում է նայել Գուրգէնէն):

ՄԱՐԻ

(Կամ ենալով ծածկէն Անապյէ ներկայութիւնը, էսիցն ան-  
ցուում է նրա յերեւը և կանգնուում է Անապյէն և Տիգրանին  
բաժանող քարտաժութեան գծէ վրայ ու կամաց տառած):  
Ամուսինս... շատապիք գնանք:

ԱՆԱԱ.

(Առանց յետ դաշտալու հաղիւ արդասանելով)  
Ամուսինը... (Զայ զեւով յենուում է բաղկանուէ  
մէջ+էն):

ՄԱՐԻ

(Նոյն գծէ վրայ դաշտալով դեղի Տիգրանը և առաջ  
հայեաց գցելով նրա վրայ): Ինչու կանգ առիք, պա-  
րոնի... Զեզ շփոթեցնում է երեխանի... Դա է  
իմ զաւակը, որին պէտքէ տանք մեր անունը:

ՏԻԳՐԱՆ

Տէր Աստուած... (Մարիկ սոսէ վրայից առանելով  
Անապյէն, որը հաղի-կանգնուած է դեղի նիւով մէջ+էն):  
Իսկ այդ... տիկինը...

ՄԱՐԻ

(Իսկոյն դուրս գտնով գծէն և յայ պալով Անապյէ վրայ):  
Իսկ սա իմ զաւակի մայրն է:

ՏԻԳՐԱՆ

(Շամբահար) Քո զաւակի մայրը...

ԱՆԱԱ.

(Հաղի-դաշտանում է դեղի Տիգրանը և աղքէրը գցելով  
նրա աղքէրին): Գուրք... կյիշէր ինձ...

ՏԻԳՐԱՆ

(Ճիշտ արքակելով) Աննա... (Եւ աղքերը մէծնայաբառ  
խախում է յեւունք):

ԱՆՆԱ

(Զիադուղնաշով այլ և հանգնել, ընկնում է իւր  
յենուած բաղկանուի վրայ):

ՄԱՐԻ

(Թունասոս) Ուրեմն ճանաչեցիք իմ որդուն Էւ:

ՏԻԳՐԱՆ

Օ՛Հ... Ես հիմայ եմ հասկանում, թէ ինչ խաղ  
խաղացիր ինձ հետ... Ես հիմայ եմ հասկանում:  
թէ որքան ստոր արարած եմ եղել ես... Հիմայ  
է երեսում ինձ այն Դամնկլեան սուրը, որ ուժ  
տարի շարունակ կախուած է եղել գլխիս վե-  
րելը և ես քաջութիւն չեմ ունեցել տեսնելու  
նրան... Ես հիմայ հասկանում եմ, որ այլեւ  
փրկութիւն չկայ ինձ... չկայ... Ա. ա. հ... Բայց  
և այնպէս... ես պատրաստ եմ, որպէս մրջիւն  
քնկնել ձեր ոտքերի տակ, որպէս սողուն հայ-  
ցել ինձ գութ... գութ միայն...

ՄԱՐԻ

Հիմայ դու ինքդ լաւ ես հասկանում: թէ ի՞նչ  
«Հարուած», հասցրիր գու ինձ... թէ որպիսի  
«ճաք» առաջացրիր ապակիի վրայ, թէ, վերջա-  
պէս, որպիսի «Ժանտահար օձ» գցեցիր իմ  
կուրծքս...

ՏԻԳՐԱՆ

Ա. ա. հ, զգում եմ... զգում եմ... Ես եմ ապե-

րախտը... Ես եմ մեղաւորը... գութ... գութ  
միայն...

ՄԱՐԻ

Դիցուք թէ ե՞ս գթացի, բայց կարող է ար-  
գեօք գթալ քեզ սա՞... (Ցոյ առլով Աննայի վրայ)  
Իսկ եթէ սա իւր անսահման բարութեամբ գթայ  
և ների էլ քեզ... ի՞նչ է ասելու քո խիղճը  
քեզ... Նայիր... ահա... հազիւ է ընկած բազ-  
կաթոռի վրայ... անյօյս... կիսակենդան... (Վ. հաս-  
կան): Դու խորտակել ես սրանց գոյսւթիւնը...  
դու խրոտակեցիր և իմ կեանքը... Դու քո ան-  
միտ վարմունքով գլորել ես մեզ մի այնպիսի  
անդունդ, որից կարելի է փրկութիւն գտնել  
միմիայն մահով... այժ, մահով... Բայց դու դեռ  
կարող ես մեզնից միայն մէկին փրկել—այս  
երեխային միայն, տալով որան մեր անունը, որն  
էլ պատրաստ կլինի իւր հրեշտակային անմե-  
զութեամբ ներել քեզ:

ՏԻԳՐԱՆ

Պէտք է փրկել... պէտք է փրկել... և կը-  
փրկեմ... Իսկ դու...

ՄԱՐԻ

Իսկ մենք ամուսիններ կըմնանք միայն աշ-  
խարհի, հասարակութեան առաջ... և այն Դա-  
մոկլեան սուրը, որի ներկայութիւնը միայն  
զգում էի ես, այժմ պարզապէս կախուած կլինի  
մեր երկուսի մէջ... և ամեն մէկս, տեսնելով  
նրան, կիմանանք, թէ որքան հեռու ենք մի-

մեանցից... Ապահարզանի վրայ ես չեմ կամեանում մոտածել անգամ; որովհետեւ նախ՝ այս երեխային անուն է հարկաւոր և երկրորդ՝ չեի ցանկանալ, որ մեր վարժունքով շատերի համար վատ օրինակ դառնայինք և ընդհանրութեան համար—բամբասանքի և ծաղրի առարկայ:

Ա.Ն.Ա.

(Հայել-առաջ գոլով) Ո՞չ, ոչ... խղճացէք ինձ... Ես չեմ եկել անջատելու ձեզ... ես... չեմ եկել... վրէժ առնելու... Ես չեմ եկել... որպէս ուրուական... կանգնելու... ձեր երկուսիդ մէջ... Տղամարդկանց թուլութիւններին... աշխարհը... ներողամիտ է միշտ... ներողամիտ եղէք... և գուք... ափկին... Ահա ես... ես եմ ինդրում այդ... մեծահոգի եղէք... աղաջում եմ... Թողէք ինձ... գոնէ հանգիստ մեռնեմ...

ՄԱՐԻ

(Գլուխը բայտառքով շարժելով) «Ո՞ր մէջ ամեն ինչ վերջացաւ» :

Ա.Ն.Ա.

(Շանթանը) Ա՛հ... օդ... (Օքորում է հանդիսած պեղը և հաղի գյուղ է իլեն բաղկանուի վրայ) Օ՛դ... ինձ... շունչս...

ՄԱՐԻ

(Վախենց ճշուառական) Ա՛հնա... Ա՛հնա... ի՞նչ պատահեց քեզ...

Ա.Ն.Ա.

Եռ... ուն... չըս... օդ... (Ալշերը կակաչ է):

ՄԱՐԻ

(Զերերը կորբառելով և յուստահապութեամբ մը երկայն հերանալով) Ի՞նչ անզգուշութիւն իմ կողմից... (անհայտէր) Ի՞նչ եղաւ բժիշկը... Ի՞նչ եղաւ բժիշկը:

ՏԻԳՐԱՆ

(Զերելով Անհայի առաջ) Ո՞չ գոնէ գոււ ինձ ներիր...

Ա.Ն.Ա.

(Ալշերը հաղի բանալով) Ներում եմ... Գուրգէ... (Փակում է իրին աղերը և նուլանում):

ՄԱՐԻ

(Սոլոտիս) ՏԵ՛՛ Աստուած...

ՏԵՍԻԼ 7.

ՆՈՅՆՔ ԵՒ ՃԱՌԱՑ

ՄԱՐԻ

(Ներս ճաշելով կանճնում է դւան հօպ) Բժիշկը (և աղլած է հօռում):

ՏԻԳՐԱՆ

(Յուստահապուշութիւն է մը կողմ, ընկառում է բաղկանուի խորիլ և երեսը ժամանում է յերերով):

### ԳՈՒՐԳԻՆ

(Որ շգեներ, ի՞նչ ի՞նչ է հարաբեռում իւր շուրջը, յանկարծ  
վայ է դպում ալիսը և վաստ է դեղի մը դեմկը ուղար-  
ուարաւ) Մայրի կ... մայրի կ...

### ՄԱՐԻ

(Ալեքս արտասուժով հօրենում է Գուրգենին և գլու-  
տար Տօր պէս ուղարշով իւր հորժին) Գուրգենիկո...  
քո մայրը ե՛ս եմ:

Կ Ա Ր Ա Գ Ո Յ Բ



### ՎԵՐՋ

## Պ. Պ. ԹԱՏԵՐԱՍԵՐՆԵՐԻՆ

Հայոցան քաղաքներից և գիւղերից, որ երեմնապէս լինում են  
հայկական ներկայացումներ, շարունակ նամակներ եմ ստանում  
արագիսի հարցերով. թէ այս ինչ կամ այն ինչ իմ ի զոյս ընծայած  
պիեսը թոյլատրուած է արգեօք ներկայացման համար, կամ ինչպէս  
պէտք է թոյլատութիւն առանալ և վերջապէս, որ կամ ում պէտք  
է գիւղեւ այդ թոյլատութիւնը ձեռք բերելու համար և այն:

Ուստի պարտք եւ համարում յայտնել պ. պ. թատերասէրներին,  
որ իմ բոլոր պիեսները, որոնք մի առ մի յիշուած են զրքիս գոյնա-  
ւոր երեսի վերջում, անդամիսի թոյլատրուած են ներկայացման հա-  
մար երկրիս պ. Գլխաւոր կառավարչապետից:

Ի հաստատութիւն բանի՛ կարելի է նայել պ. Աղեքսանդր  
թարիսանեանի՝ Թիֆլիսամ հրատարակուու, Թ.Օ.Տ.Բ.Օ.Ն.<sup>44</sup> հանդիսի 1895  
թուի գեկտեմբեր ամսի № 2 զիրքը, որի սկզբում զետեղուած է ուռ-  
սերէն և հայերէն լեզուներով, և լատկատոր ցանկ հայերէն պիես-  
ների, որոնք ներկայացնելու թոյլատրուած են Կովկասի բեմերի վե-  
րայ.<sup>45</sup> իսկ այդ ցանկի վերջում տպաւած է ուռսերէն, թէ վերևում  
յիշուած բոլոր պիեսները թոյլատրուած են Պ. Գլխաւոր կառավար-  
չապետից ներկայացման համար:

Արեմն մի որ և է պիեսի ներկայացման թոյլատութիւնը ստա-  
նալու համար բաւական է մինչեւ անդամ այդ ցանկը ներկայացուի  
տեղական պատշաճաւոր իշխանութեան և մատնացոյց անուի այն  
յօդուածը, որի մէջ նշանակուած է ներկայացման համար ընտրուած  
պիեսը և իշխանութիւնը չի մերժի իսր թոյլատութիւնը, որովհետև  
այդ ցուցակի տպագրուելու իրաւանքը ստացուած է Կովկասեան  
Գլաքննական Ասենից:

Միայն անհրաժեշտ եմ համարում աւելացնել զանազան թիւրի-  
մացութեանց առաջն առնելու համար պիեսական օրէնքի տեսակե-  
տից, որ այդ , և լակատար ցանկի<sup>46</sup> երբորդ երեսում 45-րդ յօդուա-  
ծում նշանակուած է այսպէս. Մելնիկտ, Զարայզպան, ուրեմն Փաս-  
լաձինա, իսկ 46-րդում այսպէս. Մոդա, Մօդա, կօմ. և 1 դ. օգո-յե;  
այն ինչ , Մօդան<sup>47</sup> իմ հեղինակութիւնն է և նրա թոյլատութիւնը են  
ինքս եմ ինդրած և ստացած:

Իսկ ներկայ , Դամենկեան սուրբի<sup>48</sup> ներկայացման թոյլատութիւնը  
զետեղուած է զրքիս 3-րդ երեսում և չէ մտած որոշեալ ցանկի մէջ,  
որովհետև այս պիեսը տպագրուած է , Թատրոն<sup>49</sup> հանդիսի այդ  
համարից յետոյ:

Է. Տ. Պ.

18369

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Արևա:	Տարբերակ	Տարբերակ	Արևա:
6	14	Ղիցուկ	Ղիցուք
8	3	Անչու	Ինչու
	14	թէթեացած	թեթեացած
9	12	ստէպ	ստէպ
	14	պատճառաբանում տ.յդ	պատճառաբանում է այդ
10	15	արդէն	արդէն
	5	մեջ	մէջ
	1	օդնութեան	օդնութեան
11	4	միան քեզ	միան քեզ
	2	այդ բոլորի հետ	այդ բոլորի հետ,
12	5	ձախում	ձաղում
13	9	գան,	գնա,
16	16	ասեց	ասեց,
18	9	ալեկոծում է	ալեկոծում է
20	9	վերքին	վէրքին
22	14	իրենց	իրենց
	2	աշխահի	աշխարհի
30	2	տուեցեք	տուեցէք
32	3	դու-ան	դու-ան
33	7	հա-	
34	7	միխաղիր	մի խնդիր
40	2	հենց	հէնց
42	14	իշումն է	ինչումն է
44	9	ժուանալով	ժուանալով
45	6	կագնեն	կանդնեն
50	11	շուտափոյտ	շուտափոյթ



2013

